Թարգմանված է անգլերենից

Հաստատված է՝

ԲՀԻ Օժանդակության Հիմնադրամի
Գերագույն Կառավարման մարմնի
2002թ. դեկտեմբերի 18-ի որոշմամբ

ԲՀԻ օժանդակության հիմնադրամի
տնօրեն Սյուզան Վեթթենշվիլեր
(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԲՀԻ» Օժանդակության Հիմնադրամի հայկական մասնաճյուղի

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադիր) հայկական մասնաճյուղը՝ «ԲՀԻՕՀ» հայկական մասնաճյուղ (այսուհետ՝ Մասնաճյուղ) Լիխտենշտեյնի օրենսդրությանը համապատասխան Վաղուցում հիմնադրված ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպության առանձնացված ստորաբաժանումն է Հայաստանի Հանրապետությունում: Մասնաճյուղը հիմնադրված և գրանցված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել «ԲՀԻ» Օժանդակության Հիմնադրամի (մայր կազմակերպության) գործառույթներն այն չափով, որքանով դրանք նախատեսված կլինեն սույն կանոնադրությամբ կամ այլ կերպ կլիազորվեն հիմնադիր կազմակերպության կողմից:

1.2. Մասնաճյուղի պաշտոնական անվանումն է՝

- հայերեն լրիվ՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ
  կրճատ՝ «ԲՀԻՕՀ» հայկական մասնաճյուղ
- ռուսերեն լրիվ Армянский филиал “Института Открытого Общества Фонда Содействия”
  կրճատ՝ Армянский филиал ИООФС
- անգլերեն լրիվ՝ Armenian Branch Office of Open Society Institute Assistance Foundation
  կրճատ՝ “OSIAF-Armenian Branch”

1.3. Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ գործող օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով, իր հիմնադիր կազմակերպության (մայր կազմակերպության) և սույն կանոնադրություններով, հիմնադիր կազմակերպության տնօրենների խորհրդի և մասնաճյուղի ղեկավար մարմնի որոշումներով:
1.4. Մասնաճյուղն իր ամբողջ գույքով՝ սեփականության իրավունքով, պատկանում է իր հիմնադիր կազմակերպությանը՝ «ԲՀԻ» օժանդակության հիմնադրամին:
1.5. Մասնաճյուղի և նրա հիմնադիր կազմակերպության (մայր կազմակերպության) փոխհարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:
1.6. Մասնաճյուղն ունի իր անվամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր, կարող է բանկային ընթացիկ հաշիվներ բացել ինչպես հայկական դրամով, այնպես էլ օտարերկրյա արժույթով: Մասնաճյուղն իրավունք ունի կրելու իր հիմնադիր կազմակերպության խորհրդանիշը:
1.7. Մասնաճյուղն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:
1.8. Մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արամի, 44

2. Մասնաճյուղի իրավաբանական կարգավիճակը

2.1. Մասնաճյուղն իրավաբանական անձ չէ: Այն իր հիմնադրի (մայր կազմակերպության) առանձնացված ստորաբաժանումն է Հայաստանի Հանրապետությունում: Մասնաճյուղը հանդես է գալիս իր հիմնադիր կազմակերպության (մայր կազմակերպության)՝ «ԲՀԻ» Օժանդակության Հիմնադրամի անունից և ի շահ վերջինիս:
2.2. Մասնաճյուղի իրավունակությունը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցման (հաշվառման) պահից և դադարում է լուծարման ավարտի պահից:
2.3. Մասնաճյուղն ունի առանձնացված գույք՝ տրամադրված իր հիմնադիր կազմակերպության կողմից: Մասնաճյուղի ղեկավարը, իր լիազորության շրջանակներում, կարող է Հիմնադրի (մայր կազմակերպության) անունից կնքել ՀՀ օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ, ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, օգտագործել ու տնօրինել դրանք, կրել պարտականություններ:
2.4. Մասնաճյուղը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է արտահանել և ներմուծել գույք՝ գնված և/կամ օրինական այլ ձեռով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել, օգտվել հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների եւ քաղաքացիների մատուցած ծառայություններից:
2.5. Մասնաճյուղը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորությունների համար: Պետությունը նույնպես պատասխանատվություն չի կրում մասնաճյուղի պարտավորությունների համար:
2.6. Մասնաճյուղին հասցված վնասը, որը հետևանք է պետական կամ այլ մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից մասնաճյուղի իրավունքները խախտող գործողությունների կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրենց պարտավորությունների ոչ պատշաճ կատարման՝ ենթակա է փոխհատուցման այդ մարմինների կողմից:
2.7. Մասնաճյուղի գործադիր տնօրենն իրավունք ունի առաջինը ստորագրել Մասնաճյուղի ընթացիկ հաշիվների վրա:

2.8. Երկրորդ ստորագրության իրավունք ունի Մասնաճյուղի գլխավոր հաշվապահը կամ այլ լիազորված անձ, ով սահմանված կարգով, Հիմնադրի (մայր կազմակերպության) կողմից հատուկ լիազորագիր-նամակի միջոցով իրավունք ձեռք կբերի ստորագրել Մասնաճյուղի ընթացիկ հաշիվների վրա:
2.9. Հիմնադիրը (մայր կազմակերպությունը) իրավունք ունի սահմանափակել մասնաճյուղի գործադիր տնօրենի և այլ լիազոր անձանց կողմից մասնաճյուղի միջոցների տնօրինման չափերն ու պայմանները:
2.10.Մասնաճյուղի գործադիր տնօրենը նշանակվում է Հիմնադրի (մայր կազմակերպության)՝ «ԲՀԻ» Օժանդակության Հիմնադրամի տնօրենի կողմից:

3. Մասնաճյուղի գործունեության նպատակները և խնդիրները

3.1. Մասնաճյուղը նպատակ է հետապնդում և ունի գլխավոր խնդիր՝ Հայաստանի Հանրապետությունում զորավիգ լինել Բաց Հասարակության Ինստիտուտի սկզբունքներին՝ մարդասիրական, բարեգործական օժանդակություն ցուցաբերելով կրթության, գիտության, արվեստի, մշակույթի, մարդու և քաղաքացու իրավունքների, ինչպես նաև սոցիալական, իրավական ու տնտեսական զարգացման և բարեփոխման բնագավառներում, որպիսի ցանկը սպառիչ չէ: Հիշատակված օժանդակությունը կցուցաբերվի Բաց Հասարակության Ինստիտուտի սկզբունքներին համապատասխան հետևյալ բարեգործական գործունեության իրականացման միջոցով, չսահմանափակվելով ներքոհիշյալ կոնկրետ ուղղություններով.
ա) բաց, ազատ և որևէ խտրականությունից զերծ հիմունքներով սատարում անհատ անձանց և կազմակերպությունների այն գործունեությանը կամ այն ծրագրերին, որոնք ուղղված են բարեփոխումների ու զարգացման խթանմանը՝ առողջապահության, իրավունքի, տնտեսագիտության, կրթության, գիտության, արվեստի, մամուլի, մարդու և քաղաքացու իրավունքների, միջազգային իրավունքի և այլ բնագավառներում.
բ) թերթերի, ամսագրերի, այլ պարբերականների և տեղեկատվական այլ աղբյուրների մատչելիությունն ապահովելու նպատակով հանրության համար բաց տեղեկատվական կենտրոնի ստեղծում.
գ) ԲՀԻ օժանդակության հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհների (գրանտների), կրթաթոշակների, ինչպես նաև «ԲՀԻ» Օժանդակության Հիմնադրամի կողմից Բաց Հասարակության Ինստիտուտի սկզբունքներին համապատասխան իրականացվող կրթական և այլ ծրագրերի ու միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և համապատասխան հրահանգավորում.
դ) գրադարաններին, թանգարաններին, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող հրատարակություններին, թատրոններին, ինչպես նաև կինոյի, ճարտարապետության, երաժշտության և հարակից այլ բնագավառների մշակութային հաստատություններին զորակցելու միջոցով արվեստի, մշակույթի ու կրթության ոլորտների նորացմանն ու զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացում.
ե) աջակցություն կրթական հաստատություններին ու ծրագրերին, ներառյալ հրատարակչական գործունեության, սեմինարների, սիմպոզիումների, կոնֆերանսների կազմակերպումը, գիտական և այլ միջոցառումների բնագավառում համակարգչային ուսուցման ապահովումը.
զ) հրապարակային, օբյեկտիվ ու որևէ խտրականությունից զերծ չափանիշների հիման վրա հետազոտական շնորհների (գրանտների) տրամադրում՝ առողջապահության, սոցիալական, իրավական ու

տնտեսական զարգացման, կրթության, գիտության ու արվեստի, մամուլի, մարդու և քաղաքացու իրավունքների, միջազգային իրավունքի և այլ բնագավառներում առաջընթացը խթանելու և խրախուսելու նպատակով.
է) ժողովրդավարության, ազատության և մարդու իրավունքների սատարմանն ուղղված ծրագրերի և տրամադրվելիք շնորհների (գրանտների) ընտրություն, համադրում և օժանդակում:
3.2. Մասնաճյուղը կարող է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործունեության բոլոր տեսակները, որոնք բխում են ԲՀԻՕՀ-ի շահերից, նպաստում են նրա կանոնադրական խնդիրների իրականացմանը և չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, Հիմնադրի և մասնաճյուղի կանոնադրություններին:

4. Մասնաճյուղի պարտավորությունները

4.1. Մասնաճյուղը պարտավոր է ներկայացնել ՀՀ-ում իր գործունեության տարեկան հաշվետվությունը և կրել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկային պարտավորություններ:
4.2 Տարեկան հաշվետվությունը պետք է հավանության արժանանա Հիմնադրի (մայր կազմակերպության) կողմից և ներկայացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.3. Մասնաճյուղի աշխատակիցների եկամտահարկի և այլ սոցիալական վճարումների համար մասնաճյուղը որպես ապահովագիր պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ նախատեսվա չափով:
4.4. Մասնաճյուղի գործունեության համար պատասխանատվություն է կրում Հիմնադիրը (մայր կազմակերպությունը):

5. Մասնաճյուղի միջոցները և գույքի աղբյուրները

5.1. Մասնաճյուղի գոյության և գործունեության համար անհրաժեշտ ամբողջ գույքը և բոլոր դրամական միջոցները տրամադրվում են Լիխտենշտեյնում տեղակայված Հիմնադրի (մայր կազմակերպության) կողմից:
5.2. Մասնաճյուղի գույքի ստացման աղբյուրներ կարող են հանդիսանալ նաև բարեգործական ներդրումները և քաղաքացիների ու կազմակերպությունների նվիրատվությունները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ թույլատրվող այլ նյութական և ոչ նյութական միջոցները:
5.3. Մասնաճյուղի գրասենյակի տարածքը և գույքը կարող են օգտագործվել Մասնաճյուղի՝ միայն սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին ու խնդիրներին համապատասխան:
5.4. ՀՀ տարածքում մասնաճյուղի կառավարմանը հանձնված գույքը գտնվում է ՀՀ պաշտպանության ներքո և կարող է սահմանափակումների ենթարկվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Մասնաճուղի կառավարումը

6.1. Մասնաճյուղի կառավարումն իրականացվում է Հիմնադրի (մայր կազմակերպության), Մասնաճյուղի վարչության և Մասնաճյուղի գործադիր տնօրենի միջոցով, որոնց իրավասությունների (ինչպես նաև իրավասության սահմանափակումների) շրջանակը որոշված է սույն կանոնադրությամբ:

6.2. Հիմնադիրը (մայր կազմակերպությունը)

6.2.1. Հիմնադրի (մայր կազմակերպության) իրավասությանը ենթակա հարցերն են՝
ա) Մասնաճյուղի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելը,
բ) Մասնաճյուղի վարչության անդամների նշանակումը և ազատումը,
գ) Մասնաճյուղի գործադիր տնօրենի և մյուս ղեկավար անձանց նշանակումը և ազատումը,
դ) Մասնաճյուղի կառուցվածքի որոշումը և աշխատավարձի ֆոնդի սահմանումը,
ե) Մասնաճյուղի ծրագրերի զարգացման ողղությունների սահմանումը,
զ) Մասնաճյուղի վերակազմակերպումն ու գործունեության դադարեցումը,
է) Մասնաճյուղի կառավարմանը հանձնված գույքի օտարման թույլտվություն տալը:
6.2.2. Հիմնադիրը (մայր կազմակերպությունը) նաև հսկում է իր կայացրած որոշումների կատարման ընթացքը Մասնաճյուղի կողմից, նրա գույքի պահպանման վիճակը, ստուգում Մասնաճյուղի փաստաթղթերը (ներառյալ հաշվեկշիռը):
6.2.3. Մասնաճուղի գործադիր տնօրենը պարտավոր է Հիմնադրին (մայր կազմակերպությանը) ներկայացնել հաշվետվություններ, ինչպես նաև, վերջինիս պահանջով՝ ցանկացած տվյալներ իր գործունեություն մասին:

6.3. Մասնաճյուղի Վարչությունը

6.3.1. Մասնաճյուղի Վարչությունը ստեղծվում է Հիմնադրի (մայր կազմակերպության) որոշմամբ: Մասնաճյուղի Վարչությունը պետք է կազմված լինի առնվազն 5 հոգուց, որոնք պետք է ճանաչված առաջնորդներ լինեն առողջապահության, իրավունքի, տնտեսագիտության, կրթության, գիտության, արվեստի, լրագրության, մարդու և քաղաքացիական իրավունքների, միջազգային իրավունքի, հումանիտար ջանքերի բնագավառում և այլն: Հիմնադրի (մայր կազմակերպության) որոշմամբ, Վարչության անդամների թիվը (Վարչությունում անդամների տեղերի թիվը) կարող է ավելացվել կամ նվազեցվել, բայց բոլոր դեպքերում այն պետք է կենտ լինի:
6.3.2. Վարչության անդամները նշանակվում և ազատվում են Հիմնադրի (մայր կազմակերպության) որոշմամբ: Վարչության անդամները նշանակվում են 2 (երկու) տարի ժամկետով և կարող են նշանակվել առավելագույնը երկու անգամ: Վարչության անդամները կարող են փոփոխվել ցանկացած ժամանակ, ցանկացած պատճառաբանությամբ՝ Հիմնադրի (մայր կազմակերպության) գրավոր որոշմամբ:
6.3.3. Վարչության անդամները չեն կարող լինել Մասնաճյուղի աշխատողներ, բայց իրավունք ունեն փոխհատուցում ստանալ հատուկ ծախսերի համար՝ համաձայն Մասնաճյուղի գործադիր տնօրենի կողմից սահմանված քաղաքականության, ինչպես նաև կարող են թոշակ ստանալ:
6.3.4. Մասնաճյուղը պետք է Վարչության անդամներին փոխհատուցի այն ուղղակի վնասը, որն առաջացել է վերջիններիս կողմից Վարչությանը ծառայություններ մատուցելու արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասն առաջացել է Վարչության անդամների մեղքով:
6.3.5. Վարչությունը պետք է իր անդամներից ընտրի նախագահ և քարտուղար: Նախագահը պարտավոր է ծանուցել Վարչության

անդամներին նիստերի/ժողովների անցկացման տեղի, օրվա, ժամի, օրակարգի մասին, վերոհիշյալ նիստերը/ժողովները անցկացնել սահմանված ձևով, նիստերի/ժողովների ժամանակ ընդունած որոշումների մասին հաղորդակից դարձնել/տեղեկացնել Մասնաճյուղի գործադիր տնօրենին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև Հիմնադրին (մայր կազմակերպությանը):
Վարչության քարտուղարը պարտավոր է կազմել նիստերի/ժողովների արձանագրությունները և պահպանել դրանք:
6.3.6. Վարչության նիստերը/ժողովները տեղի են ունենում ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ: Նիստը/ժողովը համարվում է կայացած, եթե մասնակցում են Վարչության անդամների կեսից ավելին (պարզ մեծամասնություն): Վարչությունը որոշումները կայացնում է նիստին/ժողովին ներկա կամ այլ կերպ մասնակցություն հանդես բերած անդամների ոչ պակաս, քան 3/4 մեծամասնությամբ:
6.3.7. Մասնաճյուղի վարչության իրավասությանը ենթակա հարցերն են՝
ա) մշակել և հաստատել Մասնաճյուղի ծրագրային ռազմավարությունը Մասնաճյուղի գործադիր տնօրենի հետ համատեղ,
բ) հաստատել Մասնաճյուղի տարեկան բյուջեն,
գ) գործադիր տնօրենի թափուր հաստիքի առկայության դեպքում, նշանակում կատարելու նպատակով, Հիմնադրին (մայր կազմակերպությանը) ներկայացնել նոր թեկնածություն (գործադիր տնօրենի),
դ) հաստատել գործադիր տնօրենի կողմից կատարած այն ծախսերը, որոնք գերազանցում են Հիմնադրի (մայր կազմակերպության) կողմից (կամ կանոնադրությամբ) սահմանված թույլատրելի նվազագույն չափը,
ե) հաստատել բոլոր դրամաշնորհային ծախսերը:
6.3.8. Վարչության՝ 6.3.7(բ) կետով սահմանված լիազորության իրականացման նպատակով գործադիր տնօրենը պարտավոր է բյուջեն ներկայացնել Վարչության քննարկմանը՝ հաշվի առնելով Վարչության՝ ծրագրի ռազմավարությանը վերաբերող առաջարկությունները: Վարչությունն իրավասու է հաստատել կամ չհաստատել բյուջեն, բայց չի կարող լրացումներ և փոփոխություններ կատարել բյուջեում:
6.3.9. Վարչության՝ 6.3.7(գ) կետով սահմանված լիազորության իրականացման նպատակով Վարչությունը պետք է Գործադիր տնօրենի հաստիքին ներկայացվող որակավորումների գրավոր պահանջներ մշակի, համապատասխան որակավորում ունեցող բազմաթիվ թեկնածություններ քննարկի և ընտրված մեկ թեկնածուին երաշխավորի ու ներկայացնի Հիմնադրի (մայր կազմակերպության) հաստատմանը, որը և իր որոշմամբ կատարում է նշանակում:
6.3.10. Վարչության՝ 6.3.7(դ) կետով սահմանված լիազորության իրականացման առումով ԱՄՆ 500 (հինգ հարյուր) դոլարին համարժեք ՀՀ դրամը չգերազանցող ծախսերը համարվում են նվազագույն ծախսեր: Հիշյալ սահմանը գերազանցող ծախսերը նախապես պետք է համաձայնեցվեն վարչության անդամների հետ և/կամ հաստատվեն ծախսերին անմիջապես հաջորդող Վարչության նիստի որոշմամբ:
6.3.11. Վարչության՝ 6.3.7(ե) կետով սահմանված լիազորությունների իրականացման նպատակով, դրամաշնորհային ծախսերի վերաբերյալ որոշումներ կայացնելու իր լիազորությունները Վարչությունը կարող է պատվիրակել փորձագետների հանձնաժողովին: Փորձագետների հանձնաժողովի կազմումը, իրավասությունների և այլ հարցերի շրջանակը պետք է որոշվի Մասնաճյուղի ներքին կանոններով (polozheniie):

6.3.12. Վարչության անդամները մշտապես պետք է գործեն համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների և միմյանց հետ հաղորդակցվեն վարքագծի կանոնների ամենաբարձր ստանդարտներին համապատասխան: Վարչության ոչ մի անդամ չի կարող իր պաշտոնն օգտագործել անձնական շահ ստանալու նպատակով: Վարչության անդամները պետք է խուսափեն շահերի բախումից և չխախտեն բարեկրթության կանոնները:

6.4. Մասնաճյուղի գործադիր տնօրենը

6.4.1. Մասնաճյուղը ղեկավարում է Գործադիր տնօրենը, որն առաջարկվում է Մասնաճյուղի Վարչության կողմից և նշանակվում է ԲՀԻ օժանդակության հիմնադրամի տնօրենի որոշմամբ:
6.4.2. Գործադիր տնօրենն իր իրավասությունների սահմաններում, գործում է մասնաճյուղի անունից, ներկայացնում նրա շահերը, տնօրինում մասնաճյուղի գույքը, մասնաճյուղի վարձու աշխատողների համար իրականացնում գործատուի գործառույթներ, ինչպես նաև իրականացնում այլ իրավունքներ, որոնք արգելված չեն ՀՀ օրենսդրությամբ և բխում են Մասնաճյուղի կանոնադրական խնդիրներից:
6.4.3. Գործադիր տնօրենը նաև՝
ա) ներկայացնում է «ԲՀԻ» Օժանդակության Հիմնադրամը բոլոր կառավարական և ոչ կառավարական հաստատությունների ու կազմակերպությունների առաջ, ՀՀ-ում իրականացնում է Մասնաճյուղի գրանցման, հաշվառման կամ հավատարմագրման աշխատանքները,
բ) հաստատում է Մասնաճուղի ներքին աշխատանքային կանոնակարգը,
գ) Հիմնադրի(մայր կազմակերպության) համաձայնությամբ դուրս է գրում ֆիզիկապես և բարոյապես մաշված, կորսված գույքը, նյութական և այլ արժեքները,
դ) տնօրինում է Մասնաճուղի գույքն ու միջոցները Հիմնադրի (մայր կազմակերպության) սահմանած կարգին համապատասխան,
ե) բանկերում բացում է ընթացիկ հաշիվներ Մասնաճուղի անունով,
զ) կնքում է պայմանագրեր իր լիազորությունների շրջանակներում, ապահովում դրանց կատարումը,
է) տալիս է լիազորագրեր երրորդ անձանց, նրանց պատվիրակելով սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորություններից որևէ մեկը կամ մի քանիսը,
ը) արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են Մասնաճուղի բոլոր աշխատակիցների համար,
թ) կնքում է և լուծում աշխատանքային պայմանագրերը, կոնկրետ աշխատողների ու ծառայություն մատուցողների համար սահմանում է աշխատանքի վարձատրության պայմանները Հիմնադրի (մայր կազմակերպության) կողմից սահմանված հաստիքացուցակի և աշխատավարձերի չափերի սանդղակին համապատասխան,
ժ) ապահովում է Հիմնադրի (մայր կազմակերպության) կողմից Մասնաճյուղին հանձնված հիմնական միջոցների ու այլ գույքի անվտանգությունն ու պահպանությունը,
ի) իրականացնում է այլ պարտականություններ, որոնք իր վրա են դրվում Հիմնադրի կողմից և չեն հակասում ՀՀ օրենսդրությանը,
լ) իրականացնում է այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության տարածքում «ԲՀԻ» Օժանդակության Հիմնադրամի բնականոն, արդյունավետ և օրինական գործունեության համար:

6.4.4. Մասնաճյուղի տնօրենի տեղակալը և գլխավոր հաշվապահը նշանակվում են Մասնաճյուղի Գործադիր տնօրենի կողմից:
6.4.5. Մասնաճյուղի աշխատակազմի հասարակական անվտանգությունն ու հասարակական ապահովագրումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

7.Մասնաճյուղի վերակազմակերպումն ու գործունեության դադարումը

7.1. Մասնաճյուղը կարող է վերակազմակերպվել կամ Մասնաճյուղի գործունեությունը կարող է դադարեցվել Հիմնադրի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ դատական կարգով:
7.2. Մասնաճյուղի գործունեությունը դադարում է Պետական ռեգիստրում համապատասխան գրանցում կատարելու պահից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառման կարգին համապատասխան:

Թարգմանիչ՝ Գալինա Աբելի Սիմոնյան

Վավերացման մակագրություն թարգմանչի
ստորագրության ճշտությունը վավերացնելու մասին

« 13 » հունվարի, 2003թ. ես, _____, Երևան քաղաքի թիվ 1 նոտարական գրասենյակի նոտարը, վավերացնում եմ ինձ հայտնի թարգմանչի՝ Գալինա Աբելի Սիմոնյանի կողմից կատարված ստորագրության ճշտությունը:
Գրանցված է մեղանամատյանում 5-271 համարի տակ:
Գանձված է տուրք 500 դրամ:
(Կնիք) Նոտար_____